ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Արտաշատ

N 299 -Ա

„29„ հունիսի 2026թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՆՁՆԱԿԱԶՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 1712-Լ որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. 2026 թվականի 1-ին կիսամյակում կառավարման մարմինների գործունեության առաջնահերթությունների և դրանց կատարողականի արդյունքային ցուցանիշներից ելնելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողներին խրախուսել դրամական պարգևատրմամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի հավելվածով սահմանված պարգևատրումն իրականացնել 2026 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում 3 հավասարաչափ վճարումներով՝ հուլիս, սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին:

3. Վճարման պարբերականության պահանջը չկիրառել խրախուսման ենթակա անձի հետ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո աշխատանքային հարաբերությունները

օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու (առանց վերանշանակման կամ տեղափոխման) դեպքերի վրա: Այդ դեպքերում աշխատանքային հարաբերությունները (առանց վերանշանակման կամ տեղափոխման) դադարելու պահի դրությամբ խրախուսման չվճարված մասը վճարել միանվագ՝ վերջնահաշվարկի հետ միասին:

4. Ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարողին՝ կատարել վճարում:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ԱՐՁՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ